

սլատահած է հոն «Համշիրաք եղբոր մերոյ կամաւոր աղքատին տէր Սարգիս եպիսկոպոսին Սաղմոսավանեցին եւ Տրապիզոնցի կամաւոր աղքատին տէր Կիրակոսին»³ : Գրիգոր Դարանաղցի այլուր (էջ 102) անոնց նկարագիրն կու տայ այսպէս. «Սարգիս եպիսկոպոսն՝ խստակրօն, խարազնաղղեստ, չորակերն. եւ տէր Կիրակոսն Տրապիզոնցի՝ ամենիմաստ ընթերցող, ներկուռն եւ եօթնապատիկ առաւել խստակրօն եւ չորակեր եւ անինչք եւ ամենայն առաքինութեամբ զարգրեալն՝ տեսականաւն եւ գործնականաւն» :

Ի սկզբան իրենց վաւիագն էր Յորդանանի եղերքը ընտրել խաղաղ անկիւն մը եւ ճգնիլ այն տեղ : Բայց յետոյ լսելով Եզրպոտտի անապատներու մէջ հաստատուած ճգնարաններու մասին՝ կը խնդրեն Գրիգոր Դարանաղցիէն՝ առաջնորդ ըլլալ իրենց այցելելու այն վայրերը : Այս պատրաստութեանց վրայ էին, երբ տէր Կիրակոս կը յայտարարէ թէ «Ես ի մեր Հայոց երկիրն եւ յազգին մերձ կու գնամ յիշխանութիւնն թագաւորին Պարսից հայասիրին» (Դարանաղցի, 103), վասն զի լսած էին «յոմանց զխողաց» թէ նման ճգնարաններ մեծ թուով կը գտնուին արեւելեան Հայաստան, յատկապէս Սիւնեաց աշխարհին մէջ «որ ի հին ժամանակաց անապատ եղեալ է յաշխարհին յայնմիկ, որոց տեղիքն արդէն եւս երեւին» (Դաւր. 252) : Ինչպէս Առաքել

³ Ժամանակադրութիւն, էջ 602 :